գործունեության նոր ձև, այլ տակավին խարխափում է կովի, պայքարի ու բողոքի հին ձևերի շրջանակում։

Համաշխարհային գեղարվեստական գրականության մեջ ավազակ գաղափարականի տիպերը բազմաթիվ են, իսկ գաղափարական ավազակի ամենահայտնի պատկերացումը տեսնում ենք Շիլլերի «Ավազակների» մեջ։ Հայոց գրականության մեջ ավազակ գաղափարականության հերոսներից ամենահռչակվածը Բաֆֆու քավոր Պետրոսն է («Խաչագողի հիշատակարանը»), իսկ գաղափարական ավազակի տիպը մարմնացած է նույն վիպասանի Սահրատի խմբի հերոսների կերպարանքով («Ջալալեդդին»), մի խումբ, որ ճնշված ժողովրդի դիմադրական ուժի դեռևս անկատար արտահայտությունն է ցուցահանում։

Հայ իրականության մեջ հանդես եկած առաջին գաղափարական ավազակի մասին մեզ տեղեկություններ է տալիս Հարություն Աստվածատրյան Արարատյանը իր «Жизнь Артемия Араратского» ինքնակենսագրության մեջ, որ լույս է տեսել Պետերբուրգում 1813 թվին և հայերեն թարգմանվել միայն 80 տարի հետո, 1892 թվին Պերճ Պռոշյանի ձեռքով։ Արարատյանն առաջին հայ գաղափարական ավազակի ժամանակակիցն է, պատանի հասակում տեսել է նրան Վաղարշապատում 1791—1792 թվականին և բարերարվել նրանից։ Թողնելով հիշյալ գրքից այն էջերը, որոնք վերաբերում են գաղափարական ավազակին հանդիպելու ու նրանից բարերարվելու հետաքրքրական հանգամանքներին, մեջ ենք բերում միայն այն հատվածները, որոնք անմիջաբար վերաբերում են մեր նյութին։

Ահա Արարատյանի պատմածը բառացի։

«... Մեր գյուղումն (Վաղարշապատում—Թ. Ա.) սկսեցին խոսել, թե Մերկե-Կուլաբի քահանան յուր գյուղից հեռացել է, և թե պատահած ժամանակը հարկավոր է նրանից երկյուղ քաշել։ Արդեն հայտնի էր, որ տերտերն ավազակությամբ է պարապում... Մզրախ մականունով։ Մզրախ նշանակում է տեգ, որը տերտերը կրում էր ձեռքին։ Ճիշտ է, Մզրախն երբեմնապես պարապում էր ավազակությամբ, միայն նա ուրիշներից նրանով էր տարբերվում, որ ինքը լինելով խիստ տաք, կրակոտ և բարկացկոտ, մի տեսակ էլ վրեժխնդիր բնավորության տեր մարդ, նա ավազակությունով առնում էր հարուստներից աղքատների վրեժը այսպես.— որքան ձեռքից գալիս էր, հարուստներից խլում էր, տալիս աղքատներին, կարծես այսպիսով վերադարձնում էր աղքատներին իրանց սեփականությունը, որ հարուստները յուրացրել էին։ Մերկե-Կուլաբցիք դառն աղքատ ժողովուրդ էին և միայն իրանց քահանայիցն էին ամենատեսակ օգնություն ստանում։ Եթե քահանան ճանապարհներին պատահում էր խեղճ մարդի, նա նրան տանում էր ճանապարհ դնում մինչև անվտանգ տեղ և եթե տեղեկանում էր, որ այդ մարդը աղքատ է, կարիք ունի, օգնում էր նրան, որքան յուր հանգամանքները ներում էին։ Իսկ ինքը տերտերը կողոպտված ավարից ոչինչ չէր վերցնում, բոլորն ուրիշներին էր բաժանում, այնքան լիներ,